ԴԱՍԱՎԱՆԴԻՐ,
ՀԱՅԱՍՏԱՆ

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎ «ԴԱՍԱՎԱՆԴԻՐ, ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ

Ստեփանակերտ, 8 հոկտեմբեր, 2018թ

Հաշվի առնելով Արցախի Հանրապետության (այսուհետ՝ ԱՀ) հանրակրթական ուսումնական հաստատություններում երիտասարդ կադրերի ներգրավման կարևորությունը, գիտակցելով աշակերտների համար կրթական ռեսուրսների մատչելիության անհրաժեշտությունն ու կուտակված միջազգային փորձի կիրառման կարևորությունը, ջանալով նպաստել հանրակրթության մեջ բարձրագույն կրթություն ստացած մասնագետների գիտելիքների ներդրմանը՝ Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ «Նախարարություն»), ի դեմս Արցախի կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Էդուարդի Աղաբալյանի, ով գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա և ԱՀ սահմանադրության ու օրենսդրության շրջանակներում, մի կողմից, և «ԴԱՍԱՎԱՆԴՀՐ, ՀԱՅԱՍՏԱՆ» կրթական հիմնադրամը (այսուհետ՝ «Հիմնադրամ»), ի դեմս Հիմնադրամի հիմնադիր և գործադիր տնօրեն Լարիսա Վիրջինիա Հովաննիսյանի, ով գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ Նախարարությունը և Հիմնադրամը առանձին կոչվում են՝ «Կողմ», համատեղ՝ «Կողմեր»), կնքեցին սույն փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ «Հուշագիր») հետևյալի մասին.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Սույն Հուշագրի նպատակն է համատեղել ջանքերը հանրակրթության բնագավառում երիտասարդ մասնագետների ներգրավման և աշակերտներին որակյալ կրթություն ապահովելու ուղղությամբ:

2. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1 Կողմերը նախատեսում են ԱՀ օրենսդրության շրջանակներում համագործակցել Հուշագրում նշված նպատակի իրագործման համար՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2.2 Կողմերը համաձայնվեցին համագործակցել ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ուղղություններով:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Հուշագրի շրջանակներում Հիմնադրամը պատրաստակամություն է հայտնում

3.1.1 Հավաքագրել, ընտրել և վերապատրաստել Հայաստանի Հանրապետությունում, Արցախի Հանրապետությունում և (կամ) արտերկրում բարձրագույն կրթություն ստացած երիտասարդ մասնագետների և ուղղորդել դեպի ուսուցիչների թափուր հաստիքներ ունեցող ԱՀ դպրոցներ՝ նկատի առնելով Նախարարության կողմից տրամադրված ուսուցիչների թափուր հաստիքների վերաբերյալ տեղեկատվությունը և Նախարարության հետ խորհրդակցաբար:

3.1.2 Վերահսկել Հիմնադրամի կողմից դպրոցներ ուղղորդված մասնագետների կամ ուսուցիչների աշխատանքի որակը և Հիմնադրամի հնարավորությունների շրջանակներում շարունակաբար նպաստել վերջիններիս կատարողականի բարելավմանը՝ ինչպես դասարանում, այնպես էլ դասարանից դուրս՝ արտադասարանական ժամերի ընթացքում, և արդյունքների մասին պարբերաբար տեղեկացնել Նախարարությանը:

3.1.3 Երկու տարվա ընթացքում հարկ եղած դեպքում ապահովել աշխատանքի ընդունված մասնագետների մանկավարժության գծով որակավորումը:

3.1.4 Հիմնադրամի համապատասխան փաստաթղթերի հիման վրա գործընկեր հանդիսացող Դպրոցներին առաջարկել համապատասխան խորհրդատվական ծրագրեր՝ կամավորության սկզբունքով, ինչպես նաև այդ Դպրոցներին հասանելի դարձնել Դպրոցների գործունեությանը առնչվող օտարերկրյա համապատասխան կազմակերպությունների ցանցերը:

3.1.5 Անհրաժեշտության և կարիքի դեպքում գործընկեր դպրոցների ուսուցիչների և վարչական աշխատակազմի և կրթական համակարգի այլ շահագրգիռ դերակատարների համար կազմակերպել երեխայակենտրոն ժամանակակից կրթական մեթոդների և մոտեցումների վերաբերյալ հանդիպումներ և սեմինարներ:

3.1.6 Ըստ անհրաժեշտության Նախարարության հետ համագործակցաբար նախաձեռնել շահագրգիռ հանրային լսումներ, հանրային կարծիքի ուսումնասիրությանն ուղղված սոցիալական հետազոտություններ, կլոր սեղաններ, համաժողովներ ԱՀ հանրակրթության համակարգի բարեփոխման ընդհանուր համատեքստում այս կամ այն կրթական հիմնախնդրի շուրջ:

3.2 Հուշագրի շրջանակներում Նախարարությունը պատրաստակամություն է հայտնում

3.2.1 Իր հնարավորությունների շրջանակներում Հիմնադրամին ապահովել Դպրոցներում թափուր աշխատատեղերի, հաստիքային փոփոխությունների, ինչպես նաև Դպրոցներում աշակերտների առաջադիմության վերաբերյալ տեղեկատվությամբ:

3.2.2 Իր հնարավորությունների շրջանակներում աջակցել Հիմնադրամին՝ Դպրոցների, ԱՀ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ գործընկերության հաստատման և հիմնադրամի կողմից ընտրված մասնագետներին դպրոցներ ուղղորդման գործընթացում:

3.2.3 Դպրոցների ընտրության գործընթացում հնարավորինս առաջնորդվել Հիմնադրամի կողմից մշակված "Դպրոցների ընտրության և տեղավորման" չափորոշիչներով, ինչը ենթադրում է նվազագույնը 30 երեխայի դասավանդում և նվազագույնը 6 դասաժամ ծանրաբեռնվածություն Հիմնադրամի կողմից ԱՀ դպրոցներ գործուղվող երիտասարդ մասնագետների համար:

3.2.4 Հնարավորության սահմաններում Հիմնադրամի կողմից ԱՀ դպրոցներ գործուղվող երիտասարդ մասնագետներին ապահովել ԱՀ Կառավարության կողմից մասնագետներին այլ վայր գործուղման խրախուսմանն ուղղված պետական արտոնություններով:

3.2.5 Համագործակցել Հիմնադրամի հետ ԱՀ հանրակրթության համակարգի բարեփոխման ընդհանուր համատեքստում այս կամ այն կրթական հիմնախնդրի շուրջ շահագրգիռ կողմերի հետ հանրային լսումների կազմակերպման, հանրային կարծիքի ուսումնասիրությանն ուղղված սոցիալական հետազոտության իրականացման, կլոր սեղանների, համաժողովների կազմակերպման և այլ համանման նախաձեռնությունների պարագայում:

3.2.6 Համագործակցել Հիմնադրամի հետ վերջինիս ծրագրերի համաֆինանսավորման նպատակով տեղական և արտերկրյա կազմակերպություններին և այլ կառույցներին դիմելիս:

4. ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՓՈՓՈԽՈՒՄԸ, ԼՐԱՑՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ

4.1 Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է տասը տարի ժամկետով:

4.2 Հուշագիրը կարող է լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ ցանկացած պահի: Հուշագիրը կարող է նաև լուծվել միակողմանիորեն՝ այդ մասին մյուս Կողմին առնվազն 6 (վեց) ամիս առաջ տեղեկացնելու պայմանով: Հուշագրի դադարեցումը չպետք է ազդի դրա գործողության ընթացքում սկսված ծրագրի կամ միջոցառումների արդյունավետ և վերջնական իրականացման վրա, եթե Կողմերի միջև այլ համաձայնություն ձեռք չի բերվել:

4.3 Սույն Հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են իրականացվել ցանկացած Կողմի նախաձեռնությամբ և մյուս Կողմի համաձայնությամբ:

4.4 Բոլոր այն հարցերը, որոնք չեն կարգավորված Հուշագրով, կարող են կարգավորվել Կողմերի միջև լրացուցիչ համաձայնագրերի կնքման միջոցով, որոնք կկազմեն Հուշագրի անբաժանելի մասը:

4.5 Սույն հուշագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու դեպքում վեճը ենթակա է լուծման ԱՀ իրավասու դատարանի կողմից:

4.6 Չնայած սույն Հուշագրի այլ դրույթներին, Կողմերի համար սույն Հուշագրի կնքումը կրում է բացառապես հռչակագրային բնույթ և սույն Հուշագրի որևէ դրույթ չի ենթադրում որևէ իմպերատիվ նորմի առկայություն՝ Կողմերից և ոչ մեկի համար:

4.7 Սույն Հուշագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է մեկական օրինակ:

ԱՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	«ԴԱՍԱՎԱՆԴԻՐ, ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
.....	.....
ՆԱՐԻՆԵ ԷԴՈՒԱՐԴԻ ԱՂԱԲԱԼՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ	ԼԱՐԻՍԱ ՎԻՐՋԻՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ ԵՎ ՀԻՄՆԱԴԻՐ